Հաց կթխեմ, գարի ա

1. Հաց կթխեմ, գարի ա,
Երի, երի, էրվա, օ՛յ, օ՛յ,
Էս ինչ դժար տարի ա,
Շեկո ջան, էրվա, օ՛յ, օ՛յ:

2. Կրակը թռավ քարից,
Երի, երի, էրվա, օ՛յ, օ՛յ,
Ես կմեռնեմ քո դարդից,
Շեկո ջան, էրվա, օ՛յ, օ՛յ:

3. Ծով ա դառե մեր դաշտը,
Երի, երի, էրվա, օ՛յ, օ՛յ,
Լիքը հաց ա մեր տաշտը,
Շեկո ջան, էրվա, օ՛յ, օ՛յ:

4. Հաց եմ թխել մշակին,
Երի, երի, էրվա, օ՛յ, օ՛յ,
Հոտ քաշել մանիշակին,
Շեկո ջան, էրվա, օ՛յ, օ՛յ:

5. Հաց եմ թխել մշակին,
Երի, երի, էրվա, օ՛յ, օ՛յ,
Ետ եմ նստել դռշակին,
Շեկո ջան, էրվա, օ՛յ, օ՛յ:

6. Երեսիդ կարոտել եմ,
Երի, երի, էրվա, օ՛յ, օ՛յ,
Ոնց որ վարդ մանիշակին,
Շեկո ջան, էրվա, օ՛յ, օ՛յ:

7. Հաց կթխեմ, գարի ա,
Երի, երի, էրվա, օ՛յ, օ՛յ,
Կաքավները մավի ա,
Շեկո ջան, էրվա, օ՛յ, օ՛յ:

8. Հաց կթխեմ, գարի ա,
Երի, երի, էրվա, օ՛յ, օ՛յ,
Էս ինչ ուրախ տարի ա,

Շեկո ջան, էրվա, օ՛յ, օ՛յ: